


Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԱՅԳԱՅԻՆ ԻՆՆՍՏԻՒՏԿԱՆ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ  
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ



ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ  
ՇՐՋԱՆ ՄԻԱՄԵԱՅ



ՅԵՐՈՒՍԱԼԻՄ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1876



ՄԵՏԱՍԱՆՆԵՐՈՒ ՏԱՐԻ  
ԹԻՒ 8.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

Օ Դ ՈՍՏՈՍ 31  
1876.

Ա.ԶԳ.Ա.ՅԻՆ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՃՇՏԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Ա Ն Մ Ա Է Է

« Խիտ է բեղ ընդդէմ  
խթանի աքսեղ »

Մեր նախորդ երկու յօդուածոց մէջ նկարագրեցինք ըստ կարի այն պայքարը որ տեղի ունեցած է երկու տարբեր և իրարու բոլորովին ներհակ սկզբանց մէջ, այն է ստուծեան եւ ճշմարտութեան, անիրաւութեան և արդարութեան, լուսոյ եւ խաւարի, տեսանք ակնարեւ թէ ստուծիւնն ինչպէս յանձն իւր խաւարասէր պոշտօնէից, այն է Հրէական դասուն, ամբարհաւածութեամբ և զղիւր անկելով ճշմարտութեան դէմ, անիրաւութեամբ

դատատան կը տեսնէ ըստ կամի, իսկ ճշմարտութիւնն իւր խոնարհութեան մէջ յանձն աղքատ և անխառնակ Յիսուսի կը մարառի և կը բողոքէ պատուութեան ամեն խաւարածածուկ եւ անիրաւ արարմանց դէմ: Այս դատատանի վախճանը ըստ աշխարհի տեսութեան պարտութիւնն ու մահը ճշմարտութեան կը տայ Յիսուսի սուկալի եւ և զերահան մահուամբն, սուկայն ըստ գերբնական տեսութեան, Քրիստոնէական հաւատոյ հայեցողու-

Թեամբ արդէն յայտնուած է ընդհա-  
նուր աշխարհին որ պարտութիւնն ու  
հարուածը ստութիւնը կրած է . իսկ  
ճշմարտութիւնն յաւիտենական և ան-  
մահ լինելով, աշխարհի մահուան եւս  
յաղթած և յաղթութեան աւետիար  
լուսափայլ հրեշտակաց միջոցաւ աւե-  
տուած է աշխարհին և ճշմարտասէր  
անձանց, հետեւաբար փորձով հաւ-  
տատուած և ստուգուած է որ ճշմար-  
տութիւնը որչափ եւս բռնաբարուի  
և որքան ալ հարուածի՝ երբէք չ'ոչըն-  
չանար, սյլ միշտ կեանք և միշտ անմահ  
է . նա մի այնպիսի հզօր ոսոխ է՝ որ ա-  
մեն հակառակորդ կը խորտակէ ան-  
խրնայ և կը փշուէ, թէ և հակառակորդն  
աշխարհիս ամենահզօր բռնակալն ևս  
լինի :

Պատահած են ժամանակներ եւ  
միշտ կը պատահին, ուր մարդկային  
վատ կիրքն զորանալով մտաց վերայ՝  
խիզախած է ճշմարտութեան դէմ  
իւր յագուրդին համար և աշխատած  
է տապալելով զայն ստութեան սեւա-  
թոյր դրօշ ծածանել յաղթական՝ նո-  
րա փրատակաց վրայ . եղած են ժամա-  
նակներ ևս ուր ճշմարտութեան ան-  
վիանդ պաշտպանն՝ դադրեցնելով իւր  
հզօր ձեռքը նորա պաշտպանութենէն  
թող տուած է մարդկային չարութեան  
յառաջ վարել իւր ընթացքը և ար-  
դարութեան չափը լեցնելով և դառ-  
նութեան բաժակը լիաշուրթն առնելով  
հեղուլ և զեղուլ իւր անօրէն և ըմ-  
բոստ գագաթան վրայ : Այս թողա-  
տրութենէն օգուտ քաղելով ստու-  
թեան պաշտօնեայք յաջողած են եր-  
բեմն վարագուրել ճշմարտութիւնը  
խորին տգիտութեան օգնութեամբ,  
թաքուցանել արդարութիւնը աչքե-  
րէ և խանդարել օրինաւորութիւնն  
ու ուղղութիւնը : Իսկ Աստուած որ  
միակ և գերագոյն պաշտպանն է յաւի-

տենական եւ անխորձան ճշմարտու-  
թեան, այն թողտուութեամբ կը չա-  
փէ մարդկային չարութեան աստիճա-  
նը . երբէք չը բռնաբարեր իւր շնոր-  
հած անձնիչաանութիւնն ու ազատու-  
թիւնը, թող կրտայ նոցա յառաջա-  
դիմել իրենց սիրելի և ախորժելի չա-  
րեաց մէջ . ըստ որում գթած է՝ մեծ  
երկայնամտութեամբ համբերատար կը  
լինի և կը սպասէ նոցա դարձին, երա-  
նի անոնց որ Աստուծոյ այս գթասի-  
րութենէն կրնան օգուտ քաղել զգա-  
լով իրենց ապաշնորհութիւնը և կըր-  
կին ուղղութեան վերադառնալով, իսկ  
վայ և եղուկ անոնց որք կուրանալով  
իրենց առժամանակեայ յաջողու-  
թեամբ, յամառ հետամտութեամբ  
կը յարատեւեն իրենց չարեաց մէջ .  
Թող չը խաբուին այնպիսիք իրենց  
գտած մասնաւոր յաջողութիւններէն,  
թող յիշեն իմաստնայն իմաստուն ա-  
սացուածքը . « Տեսի զամբարիշտն վե-  
րացեալ եւ բարձրացեալ իրբեւ ըղ-  
մայրն Ալիբանանու, անցի եւ ահա  
ոչ էր, խնդրեցի և ոչ գտաւ սեղի  
նորա » : Թող քննէ ամեն որ իւր արար-  
քը, թող զարթուցանէ ամեն մարդ-  
իւր խիղճն եւ այն որ իւր արարքը  
հակառակ կը գտնէ ուղղութեան եւ  
արդարութեան, և այն որ իւր խղ-  
ճէն խայթ եւ յանդիմանութիւն կը  
կրէ իւր ընթացից մասին՝ թող սակայ  
այնպիսին Աստուծոյ ահարկու և վրէժ-  
խրնդիր արդարութենէն, օր մը չէ՝ օր  
մը պիտի իջնայ այնպիսեաց գլխոյն վե-  
րայ արդար բարկութեան վրիժառու  
հարուածն և հազարապատիկ աւելի  
դառնութիւն պիտի պատճառէ այն  
առժամանակեայ քաղցրութեանց փո-  
խարէն զորս վայելած է իւր ասպրա-  
տութեանց մէջ խղճի խայթիւ և հո-  
գւոյ տագնապով . իսկ անոնք որք ի-  
րենց արարքը համաձայն կը գտնեն

իրենց խլճին և տագնապ ու խոյթ չեն կրեր իրենց խղճէն՝ այնպիսիք որքան ալ նեղութեան մէջ իյնան որքան ալ առաւապանք եւ զղիանք կրնն՝ բնաւ թող չը վհատին եւ վստահ լինելով՝ Աստուծոյ արդարութեան եւ ողորմութեան վրայ թող յարատեւեն իրենց ուղղութեան մէջ միշտ խղճի ձայնին անսալով և Աստուծոյ պատգամներն ուղեցոյց և առաջնորդ ունելով, առաքինի և ճշմարտասէր մարդին իրաւ է որ շատ անգամ մեծ դժուարութեանց կը հանդիպի, շատ անգամ յանիրաւի կը հալածուի եւ կը չարչարուի. շատ անգամ յետին աղքատութեան և չքաւորութեան մէջ կը գլորի՝ սակայն երբէք Աստուծոյ երեսէն չլինար. այս մասին ևս շատ գեղեցիկ կը խօսի իմաստունն. «Մանուկ էի և ծերացայ և ոչ ա՛նտի զարգարն արհամարեալ և ոչ սրդի արդարոյ՝ թէ մուրանայ հայ »: Գանդի առաքինի, արգար եւ ճշմարտասէր մարդն իւր սկզբան համար եթէ իւր կեանքն ևս անիրաւութեան զոհ տայ. անմահ յիշատակ մը կը թողու աշխարհի վրայ զոր ապագայ սերունդն ճանաչելով և յարգելով, պատկառանք եւ առատաստութեամբ կը հատուցանէ այնպիսի նահատակի մը արդար վարձը նորա հարազատ որդւոց և թոռանց, վասն որոյ աշխարհի անյուշողութեանց պատճառաւ, չտրտու և ճշմարտատեսոց բռնաւորներու ահէն և երկիւղէն զարհուրելով, ճիշմարտ սկզբունք մը զոհել մեծ յիմարութեան գործ է և ընդհանուր մարդկութեան յետադիմութեան պատճառ. քանզի աշխարհի յառաջագիւմութեան այն քրանաջան և մեծ մշակներն եթէ անցելոյն տգիտութեան և կուրութեան արհաւիրքէն զարհուրելով իրենց սկզբունքներն զոհին, այ-

սոր մարդիկ նոցա գիւտոց և վատտարոյ՝ աշխարհիս շնորհած այսքան բարիքները չը պիտի կրնային վայելել. Գալիլէոս որ մեծ աշխատութեամբ եւ բազում աքնութեամբ աշխարհի հին գիտութեան հակառակ, փոխանակ արեգական՝ երկիրը կը թաւալի բսաւ եւ գիտնական փաստերով հաստատեց. իբրև հերետիկոս հաւատաքնութեան ասենին մատնուեցաւ, խարուկահանդիսի սոսկալի չարչարանքէն զարհուրելով խեղճ մարդն բտիպուեցաւ գոնէ առ երեսս սուտ հրատարակել իւր գիւտը, սակայն խղճահար կերպիւ երբ այն անիրաւութեան ասենէն դուրս կ'ելլէր, դիւպուածով ոտքը գայթեց կ'ըսէ պատմութիւնը. նոյն միջոցին վերստին կը կրկնէ Գալիլէոս, թէ դարձեալ երկիրն է, որ կը թաւալի, և այսօր նորա սկզբունքն տիեզերախօսական առաջին ճշմարտութիւնն է: Սոկրատես որ հեթանոս փիլիսոփայ մ' էր, իւր համոզուած ճշմարտութիւնը գաւանջու համար, չ'երկմտեցաւ բնաւ թուհալից գաւաթն ըմպելու, սրով թէ եւ ինք մեռաւ, սակայն իւր գաւանած ճշմարտութիւնն անմահ մնալով, մեծ հարուած տուաւ հեթանոսական բազմատուածութեան. թողունք այլ բազմութիւ. օրինակներն, որք անհամար են պատմութեանց մէջ:

Ուրեմն այս ամենն կը հաստատեն թէ՛ սր և է մի ճշմարտ սկզբունք, կամ լաւ եւս է ասել ճշմարտութիւնը երբէք չը մեռանիր. յիմար են աննք և ողորմելի յիմար, որք որ և է պատճառներով ճշմարտութեան դէմ կ'ելլեն և կը տքնին նիւթական չորութեամբ բարոյական զորութեան յաղթել, եւ մարմնոյ ուժով հոգեոյ ուժը ճրատել. խորին տգիտութիւն. ուր որ կ'որոտայ բռնութիւնը իւր բաղմահար անգը-


Թու թիւններով՝ իրաւ է որ հոն երբեմն կը խեղդուի ճշմարտութեան ձայնը, բայց առ ժամանակ մի. վասն զի ապագային աւելի ուժգին պիտի հնչէ և աւելի հզօր պիտի դիմագրէ:

Աշխարհի պատմութեանց վրայ երբ մի հետաքննին ակնարկ ձգենք ինչ սուկալի տեսարաններ կը ներկայանան մեր աչքին առաջ, որքան զոհեր մարդկային անիրաւութեան, քանի նահատակք յաւիտենական ճշմարտութեան և որչափ ողջակէզք անիրաւ բռնակալութեան. քանի քանի դահակալներ, իշխաններ և զօրաւոր մարդիկ որ և է միջոցաւ ձեռք ձգած իրենց այն իշխանութիւնը չարաչար ՚ի դործ գնելով՝ մեծ անգթութիւններ դործած են. ճշմարտութեան դէմ մտքառելու եւ արդարութեան ձայնը խղզելու համար անթիւ և անհամար արդարոց արեամբ թաթաւած են, սակայն ՚ի զուր. դարձեալ յազթած է իրենց՝ ճշմարտութիւնն. բռնաւորք և բարբարոսք յաճիւն դարձած են այսօր. սակայն ճշմարտութիւնը կենդանի է եւ աւելի ազատութեամբ կը թագաւորէ աշխարհի վրայ եւ կը փառաւորի ՚ի բազմաց. ուրեմն թնղ որատայ բռնութիւնը. թնղ փրփրի կատաղութիւնը, թնղ շարժի սուրն և նախ ճիր գործէ որքան որ կարէ. մարդկային գլուխն կ'յնայ ուսոց վերայէն, մարմինն կը տրորուի, անդամք կը յօշոտին և ոսկերք կը ջախջախին. վերջապէս մահն վերայ հասնելով՝ կը վերջանայ մարմնոց կեանքն, որոյ հետ միասին կը վերջանայ նաև նիւթական բիրտ զօրութեան իշխանութիւնն, սակայն հոգին անմահ կը մնայ և ջն նուաճիր բնաւ այն կոշտ եւ բարբարոսական սղղեցութիւններէն:

Չախջախեալ մարմնոց մը հոգւոյն գաղափարներն նոյն մարմնոյն մահուան

հետ շնն վերջանար, այլ աւելի կը դարանան, կուռճանան եւ շատախղեր կ'արձակեն, քանզի հալածանքը ճշմարտութեան անձրեւն է, որ որքան տեւէ այնքան աւելի կը զօրայնէ եւ արդիւնաւոր կ'առնէ ճշմարտութեան հունձը. այս մասին այնքան բազմութիւ եւ անհամար օրինակներ կան պատմութեանց մէջ, որք բոլորովին թերահաւատ մը անգամ կարող են ՚ի հաւատ բերել և համոզել մեր ասածի ստուգութեան և ճշմարտութեանը. այն բազմութիւ օրինակաց մէջէն բուական է միայն Քրիստոնէութեան և հեթանոսութեան մէջ տեղի ունեցած այն երկարատեւ, դարաւոր և քստմունքի պատերազմը յառաջ բերել:

(Շարունակելի)



### Ա Ս Տ Ղ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Գուցէ թէ ընթերցողք դարմանան մի այսպիսի վերնագրով յօդուած տեսնելով Միծի մէջ. սրովհետեւ Միծն իբրեւ կրօնական խմբագրութիւն իւր առաջին օրէն սկսեալ ըստ կարելոյն ջանացած է կրօնական ինքնապիր եւ թարգմանական յօդուածներով ընթերցող ազգայնոց միտքը լուսաւորել սիրաբ կրթել և հոգին բարձրացնել: Միայն այս վտեմ նպատակաւ մինչեւ ցարդ տքնած ու գրած է. ուստի այնչափ չէ հետամտած կրօնականին հետ նաև ուսումնական նիւթեր մատակարարել հասարակութեան: Սակայն այս միակողմանի ուղղութեամբ հասած է